

“ՓՈՂ ՏՈՒՆԻՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ.” ԳՈՒԿ ԺԸ 16.

ՀԱՏՈՐ 17.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 1, 1903

ԹԻՒ 9

**ՐՈՐՔՈՒՆԷԼ**

Կէտը թէ՛ ցամաքային թէ՛ ծովային կենդանիներուն մէջ ամէնէն խոշորն է, և կէտերուն մէջ ալ ամէնէն խոշորն է Բորքուէլը: Հոս ցուցուածն է Բորքուէլի մէկ տեսակը որ կը կոչուի «ձծուձը յատակ», վասն զի մարմինն ներքին կողմը պայծառ դեղին է: Մարմինը երբեմն մինչև 150 Անգլոսաք կամ 67 կանգուն երկայնութիւն կ'ունենայ: Բորքուէլի մեծութեան վրայ զաղափար մը կրնայ առնուիլ բազդատելով զանիկա պատկերին մէջ անոր քով կայնող մարդուն հետ:

Բորքուէլը քանի մը աւելի փոքր կէտերէ քիչ արժէք ունի, վասն զի իւրը քիչ է բազդատապէս, և պալէնան, այսինքն բերին մէջիսև ուկորը, շատ պզտիկ է: Նաև շատ ուժեղ է և շատ թեթևաշարժ, և մեծ արագութեամբ կը լողայ: Ուստի շատ դժուար է զանիկա սպաննել: Նաև սպաննելէ ետքը դժուար է ձեռք անցնել զանիկա, վասն զի Բորքուէլը միւս կէտերուն պէս չէ, երբ մեռնի դրեթ է անմիջապէս շուրին տակ կ'իջնայ: Այս պատճառներով կէտ որսացողները շատ անգամ անոր հետ չեն իյնար, բայց միայն Նորվեգիոյ ծովեզերքին վրայ, ուր անիկա կը սպաննուի թնդանօթէ արձակուած կեռով: Թնդանօթին կը կապուի զօրաւոր չուան մը, որով կէտը շուրին երեսը կը հանուի ցած շուրին տակ իջնելէն ետքը:

Բորքուէլը մանր ձուկերով կ'ապրի և, ինչպէս կրնանք դատել անոր խոշորութենէն, ահագին ախորժակ ունի: Անգղիոյ ծովեզերքը երբեմն մեծ նեղութիւն կու տայ ձկնորսներուն, վասն զի մէկ անգամուս կ'ուտէ ուրկանի մէջ անոնց հաւաքած հարիւրաւոր ձուկերը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹԵԱՆ ՕԳՆԱԿԱՆ ՇՈՒՆ ՄԸ Ֆիլոսոֆիտ շուն մը աւելցուցած է իր ուստիկանական խումբին վրայ: Այս հաւատարիմ կենդանին, որուն անունն է Բէքս, պաշտօնապէս չէ ճանչցուած թէև, սակայն պատիւներ կամայ իր վրայ առաւ աւելի մեծ ու շինութիւն պահանջող ուրիշ պարտականութիւններ ալ:

Շունը մինչև հիմա գտած է իբր հինգ հրդեհ ճիշդ ժամանակին, այնպէս որ քանի մը դոյլ շուր բաւական եղած է բոցերուն աղետալի ծաւալումին առաջը առնելու համար: Բէքս իր զարմանալի հոտառութեամբ կրակին հոտը կ'առնէ տակաւին անոր ծուխը չերեցած, և զիշերապահին



կ'ընդունի իր հաւատարմութեան և ու շինութեան համար: Երբեք չուն մըն է Սթ. Բեռնարդոսի շան տեսակէն: Անոր տէրը, գիշերապահ մը, քանի մը տարի առաջ սկսաւ Բէքսը իրեն հետ առնել գիշերային պտոյտներու և հսկողութեան ատեն: Այս կերպով շունը սորվեցաւ գիշերապահին պաշտօնին շրջանակը, և թէ ինչ ընել պէտք է, և հետզհետէ ցուցուց իր կարողութիւնները գտնելու և ազատելու մասին դժբաղդներ որոնք սառելու վտանգին մէջ կը գտնուին ձմեռ գիշերները հոս ու հոն: Կամայ



կ'իմացնէ վտանգը: Այս կերպով հազարաւոր ոսկիներ արժող չէնքեր և ստացուածներ ազատած է այրուելէ:



Ոստիկանութեան պաշտօնեաները իրենց զիշերային հսկողութեան միջոցին շատ կը յարգեն այս ազնիւ շան ընկերութիւնը և օգնականութիւնը: Բէքս մասնաւոր ուշիմութիւն մը ստացած է գոց դռներու շուրջ դտնուած տեղերը հետազոտելու ունէ գէշ բանի հետքերը երևան հանելու համար: Կը նայիս յանկարծ ճամբայ կ'ելլէ առանձին և ետ դառնալով կը քաշէ ոստիկանութեան պաշտօնեային վերարկուէն, և այսպէս կը հասկնէ անոր թէ վտանգ մը կամ ոճիր մը կայ: Այս շունը սառելէ ազատած է բազմաթիւ անձեր:

ԸՆԴ ՀԱՏԵՑՆԵԼՈՒ ԵՆՔ

Ամէն ատեն կարելի չէ զԱստուած հաճեցնել և նոյն ժամանակ գոհ ընել մեր բոլորտիքը գանուղները: Տր. ֆէնթըրթոթ իր Նիւ Եորքէ Պոթթըն ըրած մէկ ճամբորդութեան պատմութիւնը կ'ընէ: Երկաթուղայ ընկերութիւնը նոր կանոն մը դրած էր անցորդներէն պահանջել որ ցուցքներն իրենց տամակները այսինչ դռներէն անցնելէ առաջ, և այս նոր օրէնքը հաճութեամբ չընդունուեցաւ: Կառախուսքը մտնել եկող մեծ բազմութիւն մը կար, և ամանք չէին ուզեր կենալ և փնտռել իրենց տամակները: Անցորդներուն մէջ բաւական արտունջ կար, և երբ անանց մեծ մասը դռնէն անցան, մարդ մը ըսաւ դռնապանին, «Դուք հաճելի չէք երևնար այս բազմութեան»:

Դռնապանը վեր՝ առատազին նայելով, որուն վերև վերատեսչին գրասենեակը կը գտնուէր, պատասխանեց, «Ես փոյթ չեմ ըներ երբեք հաճելի ըլլալ այս բազմութեան: Իմ բոլոր հոգս այն է որ այդ տեղ գտնուող մարդուն հաճելի ըլլամ»:

Այս պարզ մանրազէպին մէջ շատ բաներ կան ֆրիստոնեային մտածութեան արժանի: Մեր շուրջ գտնուողներուն գովեստը չէ երբեք գլխաւոր բանը վերջապէս: Այն գիտակցութիւնը թէ գոհ կ'ընենք վերն եղող Էսկը և կը հնազանդինք անոր պատուէրներուն, հազար անգամ արժէք ունի քան մարդոց հաճոյ ըլլալը:


ԱՌՏՏՐԱԼԻԱԿԱՆ ՄՈՂԵՍ ՄԸ

Բնութեան մէջ հետաքրքրաշարժ բաներէն մէկն է ապրող շատ արարածներու իրենց թշնամիներուն դէմ իրենքզիրենք պաշտպանելու կերպը:

Անոնցմէ ոմանք ունին գոյնը ծառի բուռն կամ տերեւին զոր անոնք իրենց բնակարան ըրած են, և միայն սուր աչք մը կրնայ որոշել իրենց ներկայութիւնը: Ոմանք ունին իրենց գոյնը փոխելու կարողութիւնը, այնպէս որ ինքզինքնին ճիշդ կը համարէ ձայնեցնեն բոյսերուն կամ հողին գոյնին ուր կը բնակին: Կան շատ թիւթեանիկներ որոնք շատ կը նմանին ծաղիկներու, և դժուարաւ կ'որոշուին անոնցմէ: Նաև կան անփաստիշատներ որոնք շատ կը նմանին ուրիշներու որոնք թունաւոր խաթոց ունին, և իրենց այս նմանութիւնը զիրենք կը պաշտպանէ: Կարգ մը աւերի խոշոր կենդանիներ կը պաշտպանուին այս կերպով: Անոնք զղուելի

Ան հետագայ բացատրութիւնները կուտայ ատոր նկատմամբ: Կարթի մը անցուած էր իբրև խայծ (եէմ) չորս լիպրա խոզու միս, հաս մը բընելու համար:

Վայրկեան մը ետքը պղտիկ առաջնորդը հոն է, յուզմունքէն կը դողայ, քիթը մսին կը դպցնէ, քիչ մը հեռուն կը ցատկէ և նորէն ետ կը դառնայ տարօրինակ և անորոշ կերպերով: Վերջապէս կ'անյայտանայ վայրկեան մը ետքը նորէն կու գայ, շանաձուկն ալ ետեէն կամաց կամաց վեր կ'ելլէ խայծին մօտ, կամացուկ մը կ'ունակին վրայ կը դառնայ, թեթև մը ընկղմելով մինչև որ խայծը ճիշդ մտնէ իր բերնին փայլուն խոռոչին մէջ: Եւ յետոյ երկրորդ ընկերը, որ



և վտանգաւոր երևոյթ մը ունին, և կը հսկէ անոր շարժումները գրեթէ ուստի ուրիշ կենդանիներ անոնց չեն գոչիր, թէպէտ իրօք անփաստ են: Աւտարախոյ մողէսը, որ հոս կը ցուցուի, այս տեսակ արարածներուն կարգէն է:

ՇԱՆԱԶՈՒԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԳԸ

Հարաւային Ատլանտեանի շանաձուկը, իր սոսկալի ակաւներով զինուած, զարմանալի է որ կախում ունի միայն իբր ութ մատնաչափ երկայն ձուկէ մը: Այս ձուկը ճիշդ շանաձուկան տափակ քիթին վրայէն կը լողայ, և ուստի կը կոչուի առաջնորդ ձուկ: Ունի ոսկեգոյն թևեր, ոսկեգոյն եզերքով զոյգ մը աչք, և կապոյտ ու ոսկեգոյն իրար կտրող շերտեր իր մարմնին վրայ: Գաղտնիք է թէ ինչո՞ւ անիկա առաջնորդ և պահապան ըլլայ շանաձուկին: Բայց Թրանք Թ. Պրլըն իր մէկ գործին մէջ կը յայտարարէ թէ անիկա անտարակուսելի իրողութիւն է:

և վտանգաւոր երևոյթ մը ունին, և կը հսկէ անոր շարժումները գրեթէ սենդոտ անձկութիւնով, դեռահաս ըլլալով, լարին վրայ կը յարձակի կը յափշտակէ զանիկա, և խայծը շուրէն դուրս կ'իյնայ:

Այս տարօրինակ բներեւոյթին մէջ առաջնորդ ձկան անձկութիւնը տեսնել գրեթէ ցաւ կու տայ դիտողին: Կը թուի թէ գիտէ թէ ամէն բան գէշ լիճակի մէջ է, և իր անցուգարձը շանաձուկան և նոր իջուցուած խայծին մէջտեղ, ամառնային փայլակին ցլթին կը նմանի: Շանաձուկը ատեն մը կը վարանի — խոզու մսին այն խոշոր կտորը շատ հրապուրիչ է — բայց վերջապէս, իբր թէ յանկարծ որոշում մը տալով, ուղղակի նաւուն կողմը կը դիմէ, և կամացուկ մը կը հեռանայ: Անթիթութեան անգամ աւելի ոյժ մը հրաւիրած է զանիկա և յաջորդ առաւօտ, արշալոյսին, անիկա կ'երևնայ հանդարտօրէն պառկած՝ ալիքներուն վրայ ծովուն երեսը:

տասնըվեց փոքրիկ շանձուկերէ շրջապատուած, որոնց մէջ առաջնորդը կը պարտի կատակերգական ձևով իբրև անոնց տէրը: Եւ անոնք, նոր եկողները, ուշադրութիւն չեն տար այն ժրջան, բարեացակամ փոքրիկ արարածին, որ դըլիկի նման ցատկելով, կը հաւաքէ այն առողջ կայտուուն խումբը և շանձկան բաց բերնին մէջ կ'առաջնորդէ զանոնք, ապա տանի նաւահանդիսար, զոր անիկա կը պատրաստէ իր ձագերուն համար:



ԱՆՀԱՆԴԱՐՔ ՓՈՒՐԻԿ ՍԵՐՄԸ

«Բան մը կը լսեմ», ըսաւ պղտիկ Սերմը, որ անհանդարտ կ'աճէր մութ հողին մէջ: «Լսածդ անտառին վայրի կենդանիներուն ոտքերուն ձայնն է» ըսաւ Արմատը, որ փոքրիկ սերմին քովի կը կենար: «Անոնք իրենց ձմեռուան թաքստոցներէն և քունէն դուրս ելած են և կը թափառին ու գարունը կը փնտռեն:» «Ի՞նչու վեր ելել և զանոնք տեսնել. հոս ձանձրացած եմ», ըսաւ Սերմը: «Սպասէ, պղտիկ. տակաւին քու գետնէն դուրս ելելուդ ժամանակը եկած չէ» ըսաւ Արմատը: «Ես հիմա սկսած եմ հիւթը վեր դրկել իմ Ծառիս բունին և ոտներուն մէջ:» «Հոտ մը կ'առնեմ», ըսաւ Սերմը, «Ի՞նչ անուշ և հաճելի է:» «Ստիկա հողին հոտն է, որ տաքցած է արևէն և հարաւային մեղմ հովէն», պատասխանեց Արմատը: «Ես կ'ուզեմ վեր ելել և տաքնալ արևին մէջ: Հոս շատ ցուրտ և տխուր է, և ա՛լ չեմ կրնար քնանալ», ըսաւ անհամբեր Սերմը: «Քիչ մը սպասէ», ըսաւ Արմատը, «Վասն զի արևը պիտի ծածկուի ձիւնի ամպերուն մէջ, և հովը կը փչէ արևելքէն: Դուն աւելի ապահով ես գետնին ներքև:» Եւ Սերմը ջանաց անգամ մըն ալ քնանալ և երազել անցեալին տարօրինակ և հաճելի բաներուն վրայ: «Կը զգամ թէ կ'աճիմ», գոչեց Սերմը ապշած, քանի մը օր յետոյ: «Ես խռոված և անհանգիստ վիճակի մէջ կը գտնուիմ: Վերջ աւելի տեղ կ'այ», «Ս.յո», պատասխանեց Արմատը: «Ես տեսայ անգամ մը, երբ իմ ծառս և ես տեղէ մը ուրիշ տեղ տարուեցանք, տեսայ թէ աշխարհ շատ ընդարձակ է, Բստեցաւ ինձի թէ անիկա շատ գեղեցիկ է ամառը: Ես երբեք չէի ակնկալեր զանիկա տեսնել, վասն զի իմ տեղս և պարտաւորութիւնս հոս են:» «Բայց ես հոս չեմ կրնար հանդարտ

կենալ», ըսաւ Սերմը, «Վասն զի վեր կը հրախմբու և կը մկուրմ:» «Գեոքիչ մըն ալ սպասէ», ըսաւ Արմատը, «Վասն զի կենանքին գինին զոր վեր Ծառին մէջ զրկեցի, սառած է անոր երակներուն մէջ:» Եւ Սերմը լռեց ու սպասեց: «Հիմա եկած է դուրս ելելուս ժամանակը», հարցուց հեղուկեամբ, քանի մը օրեր ալ անցնելէն ետքը: «Ս.յո», ըսաւ Արմատը, «կանայ կամայ դէպի վեր ճանարայ բաց քեզի կակուզ հողին մէջէն, և երբ կը դորանաս և կը զգաս տաք արևը և անուշիկ հովը, և կը տեսնես իմ գեղեցիկ Ծառս, միտքդ ընդ զիս իմ ստորին կայսրութեանս մէջ: Ես պիտի կարօտնամ քեզ:»

Եւ եռանդուն Սերմը, կէս մը ահարեկ և կէս մը ուրախ, կոտրեց իր շղթաները զարնան օրերուն մէջ և



եղաւ շքեղ տունկ մը, պանծալի իր բողբոջներով և ծաղիկներով: Բայց միշտ սիրով կը մտածէր և կը յիշէր ցածր գետնին մէջ գտնուած այն իր խոնարհ բայց իմաստուն բարեկամը:

ՄԻՍ ՄԱՐԻԱ ՈՒԷՍԹ

Մեր դեռահաս ընթերցողներէն ոչ ոք պիտի ճանչնայ այս պատկերը, բայց եթէ անոնք ցուցնեն զանիկա իրենց մեծ հայրերուն կամ մեծ մայրերուն, այդ ծերունիներէն ոմանք պիտի ըսեն թէ հին բարեկամի մը երեսը կը տեսնեն: Միս Ուէսթ Կ. պոլիս եկաւ 1852ին Բողբոջականաց Աղջկանց դպրոցին Պէպէքէ խափազ փոխադրուելէն անմիջապէս ետքը, Դպրոցին հոգը ստանձնեց Միսիս Է. Վէրէթի մահէն ետքը, և աւելի ետքը անոր քոյրը եկաւ իբրև օգնական:

1853ին Միս Ուէսթ Մարգուան գնաց այն տեղի աղջկանց դպրոցը կազմակերպելու համար. և աւելի յետոյ գնաց Խարբերդ այն տեղ ժամանակաւոր կերպով օգնական ըլլալու: Մենք զանիկա հոն գտանք երբ առաջին անգամ եկանք այս երկիրը, և երբ դեռ քիչ ժամանակ կեցած էինք Խարբերդ, Կիրակի օր մը մէկ տեղ այցելեցինք Եղեգի գեղը, և հոն Անգղիերէն քարտը մը խօսեցանք, զոր Միս Ուէսթ, նստելով կրնարուն մէջ, Հայերէնի թարգմանեց: Գրեց գիրք մը Սերս Խարբերդ անունով, որուն շատ օրինակները ծախուեցան:

Միս Ուէսթ ժամանակ մը աշխատեցաւ Անգղիացի նաւաստիներուն մէջ, նախ Զմիւռնիա յետոյ Կ. պոլիս: Մեռաւ քանի մը տարի առաջ Փարիզ, վերաբուժական գործողութեան մը ենթարկուելէն ետքը:



ՉԻՆԱԿԱՆ «ՆԱԻԱԿՆԵՐՈՒ ՔԱՂԱՔ»

Չինաստանի ամէնէն հետաքրքրական քաղաքներէն մին է Բանթոն, անաւակներու քաղաքը: Միսիսնարներուն հոս գործելու սկսելէն առաջ, գետի ընակիչներուն տղիտութիւնը և անարգ վիճակը գրեթէ անհաւատալի էր: Հայերը կը ծախէին իրենց աղջիկները իբրև վաճառք, և մէկը ուրիշի մը կենալ չէր ուզեր ազատել, որ չըլլայ թէ անոր ճակատագրին խառնուած ըլլայ:

Անգղիերէն թերթի մը թղթակիցը հետագայ շահեկան տեղեկութիւնները կու տայ գետի նաւակներէ մէկուն կենանքին վրայ:

Օր մը երբ Բանթոնի մէջ կը պարտէինք անոր Երոպական ոճով շինուած դարաստափներուն (թէրացա) վրայ, մեր խորակը մտաւ սամիան (գետանաւ) մը, որ ուղղուեցաւ ջրանցին մէջէն դէպի ծովածոցը: Զրանցին մէկ կողմը կը տեսնուէր տղմուտ, աղտոտ հին Բանթոն քաղաքը, և միւս կողմը լայն դաշտագետինները Երոպական գեղեցիկ գաղութին առջև: Սամիանը կը հովանաւորուէր պամպուէ ծածքով մը, որուն ներքև նստանք փոխաթով ծածկուած ցած, փայտէ նստարանի մը վրայ: Տախտակամանին վրայ փոխաթ փռուած էր, և նաւակին մէջ ծայրէ ծայր մաքրութիւն կը փայլէր: Դեռատի աղջիկ մը և անոր մայրը, որ սամիանին նաւաստիներն էին, երկուքն ալ կը թիւովարէին և նաւակը կը սահէր ջուրին վրայ հիանալի արագութեամբ: Կ'ապ-

չէինք դիտելով անոնց ճարպիկութիւնը որով նաւակը յառաջ կը մղէին միւս այնքան նաւակներուն մէջէն, որոնց մեծ մասը սամփիան էին և ուրիշ նաւեր վաճառքներով բեռնաւորուած: Այս վերջիններէն ամէն մէկը շատ հին ոճով շինուած թնդանօթներ ունէին և դարապիստ կոչուած հին հրացաններ: Ասիկա նշան էր թէ ո՛ր աստիճան էր այս ժողովրդին սարսափը ծովասպատակներուն երեսէն:

Նաւակին մէջ գտնուող միջին տաւրիքով կին մը ըսաւ թէ երբեք ցամաքի վրայ ոտք դրած չէր: Ուրիշ հազարաւորներու պէս սամփիանի մէջ ծնած ու մեծցած էր, և երբեք փափաք կամ պէտք ունեցած չէր ցամաքի վրայ կոխելու: Այլը ջուրի բեռնակիր էր և կը գործէր այն շատ մը նաւակներէն մէկուն մէջ որոնք մեր երկու քովերէն կ'անցնէին կը դառնային: Նաև իրենց սեպհականութիւնը եղող նաւ մը ունէին ծովածոցին մէջ: Որդիները ամուսնացած էին և կը բնակէին այդ նաւին մէջ, և յաճախ այցելութեան կու գային իրենց ծնողաց, որոնց կը ցուցնէին որդիական այն յարգանքը որ Չինացիներուն յատուկ է:




ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ԳՈՒԹ ՅՈՒՅՆՆԵԼ

Անցեալ օր բնակարանին պատուհանէն տեսայ զթուրթեան գործ մը զոր պատմելու արժանի կը համարիմ: Խեղճ ձի մը կը շանար բաւական ծանր բեռ մը զառիվայրէ մը վեր քաշել: Այս միջոցին մարդ մը կ'երթար ագարակի կառք մը նստած, զոր կը քաշէր զօրաւոր ձի մը: Երբ տեսաւ բեռքաշող միւս ձին, առանց բան մը ըսելու փողոցին մէկ կողմը ուղղեց իր կառքը, վար ցատկեց անկէ, հանեց իր ձին կառքէն և տարաւ լծեց զանիկա միւս կառքին, և երբ քաղցր խօսք մը ըսաւ իր ձիուն, ազնիւ կենդանին ուժով մը քաշեց այն ծանր բեռով կառքը զառիվայրէն վեր և հարթ գետինին վրայ հանեց: Այնուհետև հանդարտութեամբ հանեց իր ձին այդ կառքէն և նորէն լծեց իր կառքին և իր ճամբան գնաց, իրր թէ բան մը պատահած չէր: Գործը հինգ տասը վայրկեանէ աւելի չտևեց, և սքանչացայ մարդուն հանդարտութեան, զուարթամտութեան և արագաշարժութեան վրայ այս զթուրթեան գործը կատարած միջոցին:

Ո՛րչափ քիչ են անոնք որ այս մար-

դուն պէս պատրաստ են օգնել ներդրութեան մէջ գտնուող մէկուն և ազատել չարչարուող խեղճ անխօս կենդանի մը:



ՀԻՆ ԳՐԱՄԸ


Օղբ սաստիկ ցուրտ էր, այնքան ցուրտ որ անոր նմանը տեսնուած չէր տարիներէ ի վեր: Փոքրիկ մարմնով ձերու մը, Յովհաննէս, նստած էր փողոցին անկիւնը իր ձեռքը աղտոտ գլխարկի մը բռնած զոր կ'երկընցընէր ամէն անցորդի: Անոր երկու սրունքներն ալ կտրուած էին երկաթուղիի մը արկածով հինգ տարի առաջ: Այս հինգ տարիներու աղքատութեան մէջ մարդուն աշխատասէր կինը լուացք ընելով պահած էր ընտանիքը: Հիմա կինը հիւանդ պառկած էր և երկու փոքրիկ տղաքը տունը կը գտնուէին մսած և անօթի, և Յովհաննէս ստիպուած էր դուրս ելլել և մուրալ: Այսօր թէև նորէն նստած էր այդ անկիւնը ուր սովորաբար յաջողութիւն կ'ունենար, սակայն անցորդները քիչ էին, և անոնք ալ իրենց գործերուն շատ զբաղած ըլլալով կ'անցնէին կ'երթային առանց ուղորմութիւն տալու: Երբ մարդը կը մտածէր այս բաներուն վրայ, խու՛մբ մը զուարթ տղաք եկան, դողճի ուսանողներ: Երբ մտեցան, ձերուկ Յովհաննէսը երկնցուց իր գլխարկը: Տղանքն մին, որ փողոցէն հին ժանգոտ ստակ մը գտած էր, զանիկա անարժէք բան նկատելով ձերուկի Յովհաննէսի գլխարկին մէջ նետեց: Գիշերը հասաւ և Յովհաննէս իրեն ողորմութիւն ընդունած քիչ մը ըստակով և այն հին դրամով նպարավաճառին գնաց հոն իրեն ստակին չափով ուտելիք առնելու համար: Թարի նպարավաճառը հին դրամը տեսնելով, ըսաւ որ մէյ մը նայի զանիկա: Չանիկա լաւ մը զննելէ ետքը ըսաւ Յովհաննէսի թէ անիկա էր Սպանիական հին դրամ մը որ քսան Անգլոսիկ կ'արժէր: Թէև օդը ցուրտ էր և Յովհաննէս յոգնած, սակայն գնաց դուռ այն ստակը իրեն տուող ուսանողը, և ըսաւ թէ սխալած էր ան և ստակը ետ տուաւ: Տղան առաւ ստակը և յաջորդ օրը զանիկա տարաւ դրամատուն մը, ուր այսպիսի բաներ կը գնէին: Տղան դրամացաւ երբ այն դրամին փոխարէն 20 Անգլոսիկ տրուեցաւ իրեն: Ժամանակ մը տղան երջանկութիւն զգաց իրեն այդ

գիւտին համար: Բայց յետոյ միտքը բերաւ ձերուկ մուրացկանը, և վաղեց այն անկիւնը ուր անիկա կը նստէր սովորաբար: Մարդը հոն նստած էր և սովորականէն աւելի գէշ վիճակի մէջ կ'երևնար: Բարետիրտ ուսանողը ըսաւ Յովհաննէսի թէ եկած էր ստակին կէսը իրեն տալու համար: Ուստի անոր մէջէն 10 ոսկին անոր տուաւ, և Յովհաննէս անմիջապէս բժիշկին գնաց և իր հիւանդ կինը նայելու տարաւ զանիկա: Տասը ոսկին բաւական եղաւ դեղ գնելու, որով կինը շուտով առողջացաւ, և տղոցը հանդերձ և ուտելիք գնելու, նաև Յովհաննէսի կոշիկներու նորոգութեան դրամագլուխ ըլլալու: Յովհաննէս հիմա ա'լ չմտորար:



ՅՈՒԼԻՍԻ ՀԱՆՆԵԼՈՒԿԻՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

- 1. Դրամ: 2. Բժիշկ: 3. Էջըն: 4. Կէլա:
  - 5. Թողմ: 6. Գետամ: 7. Իլու: 8. Եթեր:
  - 9. Հանէս: 10. Աթէնք:
- Լուծեցին, Տեղեկութիւն: — Խաղատուր Յ. Անտոնեան, Կարապետ Ս. Աղաճանեան, Անդրէս — Վարդան Վարդերեսեան:



ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐԲԵՆ

0	.	.	.	.	0
.	0	.	.	.	0
.	.	0	.	.	0
.	.	.	0	.	0
.	.	.	.	0	0
.	.	.	.	.	0
0	.	.	.	.	0

- 1. Հրեայ բարեպաշտ կին մը: 2. Փոքր Ասիոյ եկեղեցիներէն մին: 3. Փղշտացոց մէկ քաղաքը:
  - 4. Գալիլեայի քաղաքներէն մին: 5. Եւսեմի ժողովը:
  - 6. Ղևտական քաղաք մը: 7. Հերովդէսի դասկարգին:
- Այս քառակուսին մէջ գրոներուն հանդէպող գիրերէն կ'զմուած տրամակնիւններէն մէկը վերէն վար ձախէն ալ կը կարդացուի բարեպաշտ կնոջ մը անունը, իսկ միւսը վերէն վար աջէն ձախ կը կարդացուի առաքելի մը անունը:

Տարեկան բաժանորդագին՝ 6 դահ. արծաթ կանիկի, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտիոնարց Ընկերութեան կողմէն  
Արտօնատէր Ջ. Բ. ԿՐԻՆ  
Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՍ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՂԻՍ  
Ի ՏԳՐԱՆԻ Ա. ՅԱՌՈ ՊՅՈՍԵՍՆԸ  
Ֆինանսները Եօզուշու, Ամերիկան Խան